(35-2(Հ.ՍՍՀ)-22

ՀՐԱՀԱՆԳ

ՄՏԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ, ԽՈՐՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՄՅՈՒՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՏԱՆԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ-Ի Կ. Գ. ԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ 1934

Սրբագրեց Ա. Հախվերդյան

Պետհրատի տպարան Գլավլիտ 207 Գրատիպ 500 Տիրաժ 5600

20 FEB 2019

ՀՐԱՀԱՆԳ

ԲՈԼՈՐ ՇՐՋԳՈՐԾԿՈՄՆԵՐԻՆ

ՀՍԽՀ կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և ՄՏԿայաններում կազմակերպված են 566 խորհրդային պատգամավորական խմբակներ, վորոնց մեջ ներգրավված են 8937 գյուղխորհուրդի անդամներ ու հարվածային կոլտնտեսականներ: Խորհրդային պատգամավորական խմբակների շուրջը համախմբված հազարավոր այդ ակտիվիստների հաջող և արդյունավետ աշխատանքի ընթացքն առաջադրում է պահանջ, խմբակի յուրաքանչյուր անդամին մանրամասնորեն ծանոթացնել խմբակի կազմակերպչական սկզբունքներին, նպատակների, իրավունքների և պարտականությունների հետ: Ելնելով դրանից հրատարակվում է «կոլտնտեսություններում գյուղական խորհուրդների խորհրդային պատգամավորական խմբակների աշխատանքների մասին» հրահանգը, վորպիսին մասսայականացնելու համար առաջարկվում է.

1. Հրահանգը հասցնել յուրաքանչյուր խորհրդային պատգամավորական խմբակին նրա առանձին անդամներին:

2. Խորհրդային խմբակների անդամների համար կազմակերպել մեկ օրյա դասընթաց-կոնֆերանսներ և մշակել հրահանգը:

3. Հսկել, վոր խորհրդային պատգամավորական խմբակներն իրենց աշխատանքի ընթացքում ղեկավարվեն այն սկզբունքներով, վոր նախատեսված են հրահանգի մեջ:

ՀՍԽՀ Կենտգործկոմի կազմբաժնի վարիչ՝ Գ. ՑԵՂԻԱՁԱՐՑԱՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՄՏԿԱՑԱՆՆԵՐՈՒՄ, ԽՈՐՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՄՅՈՒՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՏԱՆԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Կոլտնտեսություններում գյուղական խորհուրդների խորհրդային պատգամավորական խմբակները՝ գյուղխորհուրդի մասսայական աշխատանքների այն ստորին բջիջներն են, վորոնց միջոցով և ոժանդակությամբ գյուղխորհուրդները իրականացնում են առորյա կապը ընտրողների հետ և ներգրավում գ. խ.-ների գործնական-աշխատանքներում կոլտնտեսականների լայն մասսաները՝ կոլտնտեսությունները կազմակերպչորեն-տնտեսապես և քաղաքականապես ամրացնելու համար:

2. Խորհրդային պատգամավորական խմբակները կազմակերպվում են այն կոլտնտեսություններում, վորտեղ կան գյուղխորհրդի կամ ընտրովի վերադաս խորհրդային որգանների (Շրջանային Գործադիր Կոմիտեների, Կենտրոնական Գործադիր Կոմիտեի) վոչ պակաս, քան յերկու անդամներ կամ թեկնածուներ:

3. Գյուղխորհուրդի և կոլտնտեսության տերիտորիայի նույնության դեպքում խորհրդային պատգամավորական խմբակները կազմակերպվում են կոլտնտեսության արտադրական բրիգադներում:

4. Յերբ խորհրդային պատգամավորական խմբակները կազմակերպվում են կոլտնտեսության կից, կոլտնտեսության արտադրական բրիգադներում կազմակերպվում են խորհրդի պատգամավորներից և ավյալ կոլտնտեսության ներգրավված ակտիվիստներից պատգամավորական պոստեր:

5. Կոլխոզի խորհրդային պատգամավորական խմբակի կազմի մեջ մտնում են վորպես անդամներ գյուղխորհրդի այն անդամները ու թեկնածուները, վորոնք ավյալ կոլտնտեսության անդամներ են, նույնպես և կուլտ ընկերական դատարանի անդամները առաջավոր կոլտնտեսականները, կոլտնտեսության սպասարկող մասնագետ գյուղատնտեսները և պատմբակի աշխատանքին առանձնապես ներգրավված ակտիվը:

Խորհրդային պատգամավորական խմբակների ընդհանուր ժողովներում վճռական ձայնի իրավունքից ոգտվում են նրա բոլոր անդամները:

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ
ՀԱՄԱՐ
III-3766գթ

Բ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

6. Տասից ավելի անդամ ունեցող խորհրդային պատգամավորական խմբակների աշխատանքը ղեկավարելու համար խորհրդի անդամներից և թեկնածուներից ընտրվում են յերեք հոգուց բաղկացած պատմբակի բյուրո:

Խմբակի բյուրոն իր կողմից ընտրում է խմբակի նախագահ: Իր կազմի մեջ տասից պակաս անդամ ունեցող պատմբակներում բյուրո չի կազմակերպվում, այլ ընտրվում է միայն պատմբակի նախագահ, խորհրդի անդամ:

7. Բյուրոյի կազմը և խմբակի նախագահը հաստատվում է գյուղխորհրդի նախագահության կողմից:

Գյուղխորհրդի նախագահությունը կամ խորհրդի սանկցիայով խորհրդային պատգամավորական խմբակը իրավունք ունեն հետ կանչել կամ փոխել պատմբակի նախագահին:

8. Խորհրդային պատգամավորական խմբակի բյուրոյի և նախագահի պարտականություններն են՝

ա) Ղեկավարել խմբակի բոլոր աշխատանքները:

բ) Հաշվի առնել խորհրդային ակտիվին ու նրա աշխատանքները:

գ) Մշակել պատմբակի ընդհանուր ժողովին և գյուղխորհրդի նախագահության կամ պլենումին մտցված բոլոր հարցերը:

դ) Կազմակերպել պատմբակների հաշվետու զեկուցումները:

յե) Նախապատրաստել և հրավիրել պատմբակի ընդհանուր ժողովներ:

զ) Ստուգել պատմբակների և գյուղխորհուրդների վորոշումների կատարումը:

9. Պատգամավորական խմբակները իրենց աշխատանքները կազմակերպում և կատարում են (համաձայն գյուղական խորհրդի և կոլտնտեսության պլանների, հիմնվելով գյուղխորհրդի դիրեկտիվների և ցուցմունքների վրա:

10. Խորհրդային պատգամավորական խմբակները բաժանվում են մասնագիտական բրիգադների ու գյուղատնտեսական, ֆինանսական, մթերման, կուլտ-կենցաղային, վորոնք իրենց աշխատանքների պրոցեսում մոտիկ կապ են հաստատում գյուղխորհրդի համապատասխան սեկցիաների հետ և նրանցից ստանում են անհրաժեշտ ոգնություն և ցուցմունքներ:

Դ. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

11. Խորհրդային պատգամավորական խմբակներն իրավունք ունեն՝

ա) Գյուղխորհուրդների համաձայնությամբ անցկացնել ստուգումներ և մասնակցել այլ հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված ստուգումներին:

բ) Լսել կոլտնտեսության, բրիգադների և նրանց անդամների զեկուցումները. իրենց աշխատանքների մասին:

գ) Մտցնել կոլտնտեսության վարչության նիստերին առաջարկներ՝ աշխատանքների բարելավման պլանների կատարման ուղղությամբ և այլն:

դ) Խորհրդային պատխմբակների կողմից ներկայացված առաջարկների կոլտնտեսության վարչության կողմից ընդունվելու դեպքում, փոխադրել այդ առաջարկները գյուղխորհուրդ, նրա նախագահության ի քննություն:

12. Բյուրոյի անդամները և խորհրդային պատգամավորական խմբակների նախագահները կարող են խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել կոլտնտեսության վարչության նիստերին:

13. Ցերբ գյուղխորհուրդներում դրվում է կոլտնտեսության զեկուցումը, անպայման լսվում է նաև համապատասխան խորհրդային պատխմբակի զեկուցումը:

14. Խորհրդային պատգամավորական խմբակների վորոշումները կիրառվում են միայն այն դեպքում, յերբ կոլտնտեսության վարչության կողմից առարկություն չեն հանդիպում:

15. Խորհրդային պատգամավորական խմբակների վորոշումները իրագործվում են կոլտնտեսության վարչության միջոցով:

16. Խորհրդային պատգամավորական խմբակները կարող են իրենց նախաձեռնությամբ համապատասխան կարգով հարց հարուցել այս կամ այն պատգամավորին հետ կանչելու մասին:

Դ. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

17. Գյուղատնտեսական բրիգադան կատարում է հետևյալ աշխատանքները՝

ա) կազմակերպել մասսաները, կոլտնտեսությունները կազմակերպչորեն-տնտեսապես ամրացնելու, մնայուն, արտադրական բրիգադաների աշխատանքը լավագույն ձևով կազմակերպելու, ի վնաս կոլտնտեսության շարժման կուլակային ազդեցությունը հարվածելու, կոլտնտեսություններում խցկված կուլակային և հակախորհրդային տարրերը հայտաբերելու և մերկացնելու համար.

բ) ներգրավել կոլտնտեսական մասսաները հարվածայնության, բերքատվության բարձրացման, աշխատանքի արտադրողականության ուժեղացման, աշխատանքի դիսցիպլինայի ամրապնդման մեջ, կազմակերպելով պայքար ձախ հավասարեցման, կեղծ հարվածայնության, դիմաղրկության և պրոգուլի դեմ.

գ) կազմակերպել մասսաներն արտադրական պլանների մշակման, կոլտնտեսականների առաջարկությունները հավաքելու և կենսագործելու համար.

դ) մասնակցել պլանները մինչև արտադրական մասերին, բրիգադաներին, առանձին կոլտնտեսություններին հասցնելու աշխատանքներին, ցույց տալով կոլտնտեսության վարչության ամեն հնարավոր աջակցությունը.

յե) կազմակերպել հասարակական հսկողություն ու ոգնություն կոլտնտեսության հողի լրիվ և նպատակահարմար ձևով, ոգտագործելու և կարգի բերել կոլտնտեսական ցանքափոխությունը, մելիորատիվ և ագրո-տեխնիկ-միջոցառումների գործադրումն ագրո-մինիմումի իրագործումն և այլն.

զ) հասարակական ներգործության մեթոդներով վճռական պայքար ծավալել անտնտեսավարության, քաշող կենդանի ուժի, ինվենտարի, մեքենաների և կոլտնտեսության գույքի հանդեպ անզգույշ վերաբերմունքի դեմ.

ը) կազմակերպել հսկողություն՝ տրակտորները, գյուղատնտեսական մեքենաները և կոլտնտեսության այլ ինվենտարը նպատակահարմար ձևով ոգտագործելու, պատշաճ ձևով պահպանելու, ժամանակին վերանորոգելու և մեքենաների հանդեպ զգույշ վերաբերվելու, վառելանյութերը, կերը խնայողությամբ ոգտագործելու և այլն.

թ) ակտիվ մասնակցություն ցույց տալ գյուղխորհրդի և կոլտնտեսության արտադրական խորհրդակցություններին մտցնելու հարցեր, վորոնք առնչություն ունեն լավագույն պլանավորման, ռացիոնալիզացիայի, ուժերի լավ դասավորման, կոլտնտեսականների առաջարկներից ավելի լավ ոգտվելու, կենցաղի բարելավման և աշխատանքի կազմակերպման հետ:

ժ) մասնակցել կոլտնտեսություններում կանանց աշխատանքի ոգտագործման հետ կապ ունեցող միջոցառումների մշակման.

ժա) ոգնել կոլտնտեսականներին՝ գյուղատնտեսական տեխնիկայի տիրապետմանը.

ժբ) կազմակերպել մասսայական աշխատանք արտադնացության մասին կառավարության առաջադրանքները կատարելու,

իրականացնել հասարակական հսկողությունը, համաձայն աշխատանքի մարմինների նարյադների, բանվորական ուժը հավաքագրելու և կոլտնտեսություններում մասնագիտական աշխատանքից ճիշտ ոգուտվելու։

ժգ) ոժանդակել կոլտնտեսության և գյուղխորհրդին սերմֆոնդ կազմելու և դրանց պահպանության վրա հսկելու, կազմակերպել կոլտնտեսության մասսան, գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելու աշխատանքին մասնակից դարձնելով և մենատնտեսներին։

ժդ) հսկել և ոժանդակել անասնապահական ապրանքային ֆերմաներում անասունների ճիշտ խնամքին, նրանց ճիշտ կերակրման, կերի բազան լավացնելու, խոտացանությունը, արմատապտուղների մշակումը, սիլոսացումը, խոտհնձի, անասունները ջրելու տեղերը բարվոքելու և այլն։ Կազմակերպել կոլտնտեսականներին պլանների մշակման մասնակցելու, ապրանքային ֆերմաներում անասունների համար զոմեր կառուցելու և հսկելու բեղմնավորման կամպանիաները ժամանակին անցկացնելու ու անասունների ամեն տեսակ հիվանդությունների դեմ պայքար կազմակերպելու և ժամանակին ահազանդելու։

ժյե) թե իր նախաձեռնությամբ և թե գյուղխորհրդի կամ սեկցիաների հանձնարարությամբ մշակել կոլտնտեսական բոլոր հարցերը, այդ հարցերի շուրջը մոբիլիզացիայի յենթարկելով կոլտնտեսականների ուշադրությունը։

18· Ֆինհարկային բրիգադան կատարում է հետևյալ աշխատանքները՝

ա) լայն կերպով ծանոթացնել կոլտնտեսական մասսային գյուղական բյուջեյին, նրա կառուցվածքի ու կատարման հետ, քննելով այդ հարցերը պատգամավորական խմբակների լայն ժողովներում, մենատնտեսների մասնակցությամբ։

բ) ծանոթանալ կոլտնտեսության ֆինանսական պլանների դրության և կատարման հետ՝ կոլտնտեսության վարչության նախագահի կամ հաշվապահի զեկուցումը լսել ընդհանուր ժողովներում։

գ) հսկել կոլտնտեսության վարչության կամ առանձին աշխատակիցների կողմից կոլտնտեսության դրամական միջոցների ճիշտ ծախսման վրա, ուշադրությունը դարձնելով կոլտնտեսության դպրոցի ուսուցչության և ագրոտեխնիկ պերսոնալի աշխատավարձի ժամանակին վճարելու վրա։

դ) կազմակերպել և անցկացնել կոլտնտեսություններում գյուղխորհրդների և նրա սեկցիաների ղեկավարությամբ, մասսայական բացատրական աշխատանք, փոխառության իրացման, ինայդրամարկղներում կամավոր մուծումների, փայավճարների և այլն մուծումների մասին ցույց տալ ամեն հնարավոր ա-

ջակցություն և հսկողություն կոլտնտեսության մասսայական, հասարակական, ֆինանսական կազմակերպություններին (ոժանդակողների)։

յե) կազմակերպել գյուղխորհուրդների նախագահության և համապատասխան սեկցիաների ղեկավարությամբ միասնական գյուղատնտեսական հարկի շուրջն ագիտացիոն բացատրական մասսայական աշխատանք։

զ) խորհրդային պատգամավորական խմբակների ընդհանուր ժողովում քննության առնել կոլտնտեսության վարչության զեկուցումը՝ կոլտնտեսության հարկադրման արդյունքների մասին, հսկել, որ կոլտնտեսության յեկամուտների ճիշտ հաշվի առնել, պահանջված հարկերը ժամանակին վճարվեն և որենքով կոլտնտեսության և կոլտնտեսականներին տրված արտոնությունները ճիշտ կիրառվեն, ինչպես նաև կոլտնտեսականների անձնական տնտեսություններից դանձվելիք հարկի ժամանակին և լրիվ մուծման կապակցությամբ կազմակերպել կոլտնտեսականների մեջ սոցմրցում, ոժանդակելով գյուղխորհուրդներին հաշվառման յենթարկելու և դանձելու հարկերը։

19· Առևտրական–մթերման բրիգադան կատարում է հետևյալ աշխատանքները՝

ա) կոլտնտեսականների մեջ տանել բացատրական աշխատանք, կոլտնտեսական առևտրի և պետական մթերումների բնագավառում կուսակցության և կառավարության ձեռք առած միջոցառումների մասին։

բ) վերանայել կոլտնտեսականների կոոպերացման պլանները և ոժանդակել նրանց իրականացման, մոբիլիզացիայի յենթարկել կոլտնտեսական–մասսաներին կոլտնտեսության սպասարկող կոոպխանութների աշխատանքները բարելավելու և նախապատրաստել նրանց զեկուցումները խորհրդային պատգամավորական խմբակների ժողովների համար։

գ) պատգամավորական ժողովներում քննելու համար նախապատրաստել կոլտնտառևտրի կազմակերպման, կոլտնտշուկաներում և տոնավաճառներում կազմակերպված ձևով դուրս գալու, առևտրից առաջացած յեկամուտները ժամանակին բաշխելու, կոլտնտառևտրական կետերի վրա խիստ հսկողություն սահմանելու մասին կոլտնտվարչության ձեռք առած միջոցների վերաբերյալ հարցերն և այլն։

դ) միջոցներ ձեռք առնել հարվածային կոլտնտեսականներին ու մենատնտեսներին առաջին հերթին ապահովելու արդյունաբերական ապրանքներով, մատակարարման սիստեմը կապակցելով մթերումների հետ առնչություն ունեցող արտադրական պլանների հաջող կատարման հետ։

յե) նախապատրաստել խորհրդային պատգամավորական ընդ-

հանուր ժողովում քննելու կոլտնտեսության մթերման պլանների վերաբերյալ հարցերը, համաձայն գյուղխորհրդի պլանների և առաջադրանքների: Միջոցներ ձեռք առնել մթերման պլանների հաջող և վաղակով կատարման համար և մթերման ընդհատումով կատարված խեղաթյուրումների դեմ պայքարելու համար համախմբելով հացի, բամբակի, մսի, բրդի և այլ մթերումների շուրջը կոլտնտեսականների և կոլտնտեսուհիների լայն մասսաները:

20. Կուլտ–կենցաղային բրիգադան կատարում է հետևյալ աշխատանքները՝

ա) համաձայն գյուղխորհրդի ընդհանուր պլանի ոժանդակել կոլտնտեսության վարչության կազմելու կուլտ–կրթական աշխատանքների պլանը և ամեն կերպ նպաստել կենսագործելու համար.

բ) ոժանդակել դպրոցի աշխատանքներին, կազմակերպել կոլտնտեսականների դպրոցական հասակի յերեխաների լրիվ ներգրավումն առաջին աստիճանի դպրոցներում, ապահովել պոլիտեխնիկ կրթությունը հիմք ունենալով կուսակցության և կառավարության այս առթիվ ունեցած վորոշումները.

գ) աջակցել գյուղխորհրդին դպրոցներն և այլ կուլտ–հիմնարկները վառելիքով և լուսավորությամբ ապահովելու, մորիլիզացիայի յենթարկել կոլտնտեսության ուժերն ու միջոցները դպրոցական շենքերի կառուցման և վերանորոգման համար, այդ աշխատանքներին մասնակից դարձնել նաև կոլտնտեսականներին:

դ) նախապատրաստել խորհրդային պատմբակների ընդհանուր ժողովում լսելու կոլտնտվարչության զեկուցումը՝ կոլտնտեսությունում կատարվող կուլտ–կենցաղային աշխատանքների և կուլտ–կենցաղային ֆոնդերի ոգտագործման մասին: Այդ աշխատանքներում մասնակից դարձնելով գյուղի ուսուցիչներին ու կուլտուրական ուժերին.

յե) ներգրավել կոլտնտեսականներին՝ դպրոցներին կից տնտեսություններն ամրապնդելու և ուժեղացնելու աշխատանքներում, կազմակերպելով խոտհնձի, հերկի և այլ աշխատանքների շաբաթորյակներ.

զ) կազմակերպել կոլտնտեսություններում քաղլուսաշխատանքներ (ակումբ, կարմիր անկյուն, կինո, ռադիո և այլն) և լայն կերպով ծավալել ագրո–տեխ. գիտելիքները: Հատուկ ուշադրություն դարձնել հակակրոնական դաստիարակության, ինտերնացիոնալ աշխատանքի կազմակերպման և այլնի վրա, այդ նպատակի համար ոգտագործելով գյուղի և շրջանի կուլտուրական ուժերը:

ը) կազմակերպել կոլտնտեսություններում անգրագետների և կիսագրագետների հաշվեառումը և ոժանդակել գյուղխորհրդին ընդգրկելու լիկկեյաններում, կիսագրագետների դպրոցներում բոլոր անգրագետներին, կիսագրագետներին, մասնավորապես կանանց և զինակոչիկներին.

թ) նախապատրաստել դպրոցի, կոլտնտակումբի, կինոյի, նախադպրոցական հիմնարկների վարիչների զեկուցումները պատմբակների լայն ժողովներում, հետաքրքրելով նախապես այդ հիմնարկները, ինչպես նաև կազմելու գործնական առաջարկներ աշխատանքները բարելավելու ուղղությամբ:

ժ) կոլտնտեսություններում կազմակերպել «ԿԱՆՀ»–ի, «Ցեբեխանների Բարեկամ ընկերության», ՄՈՊՐ–ի և նման կամավոր ընկերություններ, ոժանդակել և հսկել նրանց աշխատանքների վրա.

ժա) մորիլիզացիայի յենթարկել կոլտնտեսական մասսաները, կոլտնտեսականների առողջապահական դրությունը բարելավելու ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների շուրջը: Հսկողություն սահմանել սանիտարական և առողջապահական խնդիրների վերաբերյալ շրջգործկոմների և գյուղխորհուրդների պարտադիր վորոշումների կատարման վրա:

ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ՝ Գ. ՑԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL1239040

1934թ - 289

111
3766

ԳԻՆԸ 50 Կ.